ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանունը՝**

Աննա Իվանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային կառավարման վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Էստոնիայի Հանրապետություն, քաղաք Տարտու, 2026 թվականի հունիսի 2-4-ը

4. **Հրավիրող կողմը.**

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (FAO)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցել «Տեսությունից դեպի գործողություն. ԵՄ LEADER մոտեցումը ոչ ԵՄ երկրներում՝ տեղական պարենային համակարգերի կայուն վերափոխման համատեքստում» թեմայով տեխնիկական աշխատաժողովին՝ ուսումնասիրելու LEADER մոտեցման ներդրման և կիրառման միջազգային փորձը, տեղական զարգացման խմբերի (LAG) գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև գյուղական համայնքների կայուն զարգացման և տեղական պարենային համակարգերի վերափոխման ոլորտում կիրառվող գործիքներն ու մեխանիզմները:

6. **Քննարկված թեմաները.**

6.1 LEADER մոտեցման դերը գյուղական տարածքների համապարփակ և ներառական զարգացման գործում:

6.2 LEADER ծրագրի քաղաքական և ինստիտուցիոնալ հիմքերը Եվրոպական միության անդամ երկրներում:

6.3 LEADER մոտեցման ներդրման փորձը և առկա մարտահրավերները ոչ ԵՄ երկրներում:

6.4 Տեղական գործողությունների խմբերի (LAG) դերակատարությունը համայնքային զարգացման գործընթացներում:

6.5 Գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման և տեղական ժողովրդավարության ամրապնդման գործիքները:

6.6 LEADER մոտեցման ներդրման շրջանակներում ֆինանսական մեխանիզմների և կառավարման համակարգերի առանձնահատկությունները:

6.7 Կայուն տեղական պարենային համակարգերի ձևավորման և զարգացման գործում LEADER-ի ներդրումը:

6.8 Տեղական արտադրության, զբոսաշրջության, երիտասարդական նախաձեռնությունների և համայնքային ներդրումների խթանման գործնական օրինակները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

7.1 Աշխատաժողովի բացման շրջանակներում ներկայացվեցին FAO-ի կողմից իրականացվող տարածքային զարգացման ծրագրերը և գյուղական համայնքների զարգացման ոլորտում կուտակված փորձը՝ ընդգծելով LEADER մոտեցման նշանակությունը համայնքների մասնակցային զարգացման գործընթացներում:

7.2 Եվրոպական միության ներկայացուցիչների և Էստոնիայի փորձագետների կողմից ներկայացվեցին LEADER ծրագրի ձևավորման, ֆինանսավորման և իրականացման հիմնական սկզբունքները, ինչպես նաև անդամ պետություններում դրա կիրառման արդյունքները:

7.3 Տարտուի տեղական գործողությունների խմբի (Tartu LAG) ներկայացուցիչները ներկայացրեցին LEADER մոտեցման կիրառման փորձը Էստոնիայում, համայնքային նախաձեռնությունների խթանման մեխանիզմները և տեղական զարգացման ռազմավարությունների իրականացման արդյունքները:

7.4 Քննարկվեցին Էստոնիայի վճարող գործակալության գործունեության առանձնահատկությունները, ծրագրերի գնահատման և ֆինանսավորման ընթացակարգերը, ինչպես նաև ծրագրի իրականացման ընթացքում արձանագրված հիմնական դասերը:

7.5 Մոլդովայի, Թուրքիայի, Չեռնոգորիայի և Ալբանիայի ներկայացուցիչները ներկայացրեցին իրենց երկրներում LEADER մոտեցման ներդրման ընթացքը, ձեռքբերումները և առկա ինստիտուցիոնալ ու ֆինանսական մարտահրավերները:

7.6 Քննարկվեց LEADER մոտեցման ներդրումը տեղական պարենային համակարգերի կայուն զարգացման գործում: Ներկայացվեցին Էստոնիայի, Սերբիայի, Վրաստանի և Հյուսիսային Մակեդոնիայի փորձը՝ տեղական արտադրողների աջակցման, կարճ մատակարարման շղթաների զարգացման և համայնքային համագործակցության ամրապնդման ուղղություններով:

7.7 Մասնակից երկրների ներկայացուցիչների միջև իրականացվեցին փորձի փոխանակման քննարկումներ՝ ուղղված գյուղական զարգացման քաղաքականությունների կատարելագործմանը, համայնքների մասնակցայնության բարձրացմանը և տեղական զարգացման գործիքների արդյունավետ կիրառմանը:

7.8 Այցելություն կատարվեց Տարտուի տեղական գործողությունների խմբի գործունեության տարածք, որտեղ ներկայացվեցին LEADER ծրագրի շրջանակներում ֆինանսավորված ծրագրեր՝ տեղական արտադրության, գյուղական զբոսաշրջության,

երիտասարդական աշխատանքի և համայնքային ենթակառուցվածքների զարգացման ոլորտներում:

7.9 Ծանոթություն իրականացվեց պանրագործական տնտեսության, երիտասարդական և համայնքային կենտրոնի, զբոսաշրջային ենթակառուցվածքների և գյուղատնտեսական նորարարական նախաձեռնությունների գործունեությանը, ներկայացվեցին ծրագրերի իրականացման ընթացքում արձանագրված արդյունքներն ու քաղված դասերը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Չկան:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Աշխատաժողովի ընթացքում ներկայացված փորձը վկայում է, որ LEADER մոտեցումը կարող է արդյունավետ գործիք հանդիսանալ գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման, համայնքային մասնակցության խթանման և տեղական պարենային համակարգերի կայուն զարգացման համար:

Նպատակահարմար է ուսումնասիրել LEADER մոտեցման առանձին տարրերի կիրառման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում՝ հատկապես համայնքների մասնակցային զարգացման, տեղական նախաձեռնությունների ֆինանսավորման, միջհամայնքային համագործակցության և տեղական արտադրողների մրցունակության բարձրացման ուղղություններով:

Միաժամանակ, կարևոր է շարունակել միջազգային գործընկերների հետ համագործակցությունը՝ լավագույն փորձի փոխանակման, կարողությունների զարգացման և համայնքային զարգացման նորարարական մեխանիզմների ներդրման նպատակով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

08.06.2026թ.